

ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՆԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՊՈԵԶԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*

Քրիստոնեական մարենագրության մեջ աստվածաշնչային պոեզիան հին ավանդույթներ ունի և արժանի է բազմակողմանի ուսումնասիրության, ինչպես հունական և լատինական, այնպես, արևելյան ավանդույթների հաշվառմամբ: Նունական մարենագրության մեջ այս ժանրը հիմնադրվել է Ե. դարի Եգիպտոսում՝ Նոնոս Պանոպոլսեցու կողմից: Նրա գրչին պարկանող՝ Ս. Նովիանոս Ավերարանի վեցոպոնյա հանգով գրված ազար վերաշարադրանքն ընդգրկում էր յուրաքանչյուր գլխի բոլոր տները: Նեղինակի անձը վիճաբանությունների առիթ է դարձել: Այժմ հաստատված է, որ Նոնոսը հեթանոսությունից հրաժարվելով քրիստոնեություն է ընդունել և միաժամանակ կազմել է Դիոնիսիական հերոսապատմի ընդարձակ երգերը²:

Սուրբգրային բնագրերի և աստվածաշնչային պոեզիայի միջև կապը շար ավելի հեռավոր է Գեորգ Պիսիդեսի «Վեցոբեայ արարչագործություն» ընդարձակ պոեմում, որը գրվել է Է. դարի առաջին կեսին: Մոտ 2000 տողից բաղկացած այս պոեմը, որը ձևավորվել է Սերգիոս Ա. պարիարքին (610-638)³, չի հերքում Բարսեղ Կեսարացու կամ Գրիգոր Նյուսացու՝ վեցոբեայ արարչագործությանը նվիրված մեկնություններին⁴, այլ ավելի շուրջ, կարարելությամբ ստեղծված աշխարհի հանդեպ հիացումով լի նկարագրություն է՝ ամենակարող Աստծու փառաբանությամբ: Նկնց այդ համարեքստում է, որ հարկավոր է բացատրել ԾԳ. 24 Սաղմոսի կրկնված վկայությունները, որոնք, իհարկե, գրված են տասներկուտրոյա չափով. «Որպես զի մեծ են գործք թո, Տեր, զամենայն ինչ խնաստուրեամբ արարեր»⁵:

Գեորգ Պիսիդեսի «Վեցոբեայ արարչագործություն» պոեմի այս վկայակոչումը կարելի է քննարկել ավելի լայն համարեքստում: Աբրահամ Տերյանը «Գրիգոր Մագիստրոսի չափածո Աստվածաշունչը» ուսումնասիրության մեջ⁶ ընդգծում է ավելի քան 1000

* Այս հոդվածի ֆրանսերեն բնագիրն ընթերցվել է Մայր Աթոռում 2004 թ. տեղի ունեցած «Կանոնական իրավունքը մեկնողական գրականության պեսադաշտում» միջազգային գիտաժողովում իբրեւ զեկուցում (թարգմ.):

2 Տե՛ս *M. Geerard, Clavis patrum graecorum III, Turnhout 1979, № 5641, 5642 (= CPG) M. Geerard, J. Noret, Clavis patrum graecorum, Supplementum, Turnhout 1998, № 5641, 5642 et Add. էջ. 495 (= CPG Suppl.)*.

3 Տե՛ս *Carmi di Giorgio di Pisidia, ed. L. Tartaglia (Classici greci: Autori della tarda antichità e dell'età bizantina). Torino 1998, Տե՛ս էջ 25; CPG 7834*.

4 CPG 2835, 3154 et *J. C. M. van Winden, Hexaameron. Reallexikon für Antike und Christentum 14 (1988) 1250-1269*.

5 Tartaglia p. 314, 328, 354, 422 (= V. 55, 290, 731, 1863).

6 Տե՛ս *A. Terian, "The Bible in Verse by Gregory Magistros", in: Armenia and the Bible. Papers presented to the international Symposium held at Heidelberg, July 16-19, 1990, ed. Ch. Burchard. Atlanta/Georgia 1993,*

ստորագրված հայկական ընդարձակ պոեմի և «Վեցօրեայ»-ի փխպի հայրաբանական գրականության միջև առկա կապը: Նայ աստվածաբանական գրականության մեծ գիտական այս տրամաբանական դիպարկումը զարգացման կարիք ունի, սակայն այն ունի նաև հերազա քննարկումների անհրաժեշտություն: Ժ. - ԺԱ. դդ. նշանավոր հայ մարտնչագիր Գրիգոր Մագիստրոսի բանաստեղծական արվեստի ներկայացման ժամանակ, Տերյանը մի կողմից մարտնչում է Պահլավունի ազնվականի կապը հունական մշակույթի, իսկ մյուս կողմից՝ մոսուլմանական աշխարհի հետ, առանց մանրամասնությունների ընդգծելով իրավամբ ճշմարիտ մոտեցումը, ըստ որի՝ 1045 թ. Կոստանդնուպոլսում ստեղծված «Նազարպոլեան» պոեմի նախաբանը հունական դյուցազներգության դասական ավանդույթի շրջանակում շարադրված մի ստեղծագործություն է⁷: Լևոն Խաչերյանը, Գրիգոր Մագիստրոսին նվիրված մենագրության մեջ, որը լույս է տեսել 1987 թ. Լոս Անջելեսում⁸, ավելի մեծ ուշադրություն է հրավիրում փառաշատության հարցերի և հակամոսուլմանական բանավեճերի վրա, քանի որ պոեմը ձևավորվել է 1040/41 թ. մահացած, սուլթան Մասուդի արքունիքի պարսիկ բանաստեղծ Մանուշիրին (Մանուշիրի)⁹: ԺԱ. դարը Բյուզանդիայում բանավեճերի ժամանակաշրջան է ընդդեմ բողոքիների, ֆոնոգադիազանների¹⁰, ինչպես նաև հակոբիկների և հայերի, որոնք ներկայացված են Կ.Պոլսի Պերիբլեպոս վանքի վանական Եթիմիոսի կողմից¹¹: Խաչերյանը լուսաբանում է Գրիգոր Մագիստրոսի ընդդեմ Թեոդորասյան շարժման հակաճառական փաստարկները¹²:

Սակայն սոսկ հակաճառությունը չի կարող ամբողջությամբ բացառել Գրիգոր Մագիստրոսի աստվածաշնչական պոեմի կառուցվածքաբանական շարժանքները: Ավելի շուրջ պետք է վերադառնալ «Վեցօրեայ»-ի ավանդույթին, որին համառոտ անդրադարձել է Աբրահամ Տերյանը: Վերջինս վստահ է, որ Գրիգոր Մագիստրոսը կարարելապես փորձապետ է հունարենին, պարսկերենին չէ նկատի ունենալ միայն հունարենից հայերեն թարգմանված երկերը, բայց և այնպես այդ թարգմանություններին ևս պետք է առաջնակարգ տեղ հատկացնել: Այսպես նախ և առաջ թվարկներ «Վեցօրեայ»-ի վերաբերյալ Բարսեղ Կեսարացու թարգմանությունը (CPG 2835), որոնք Է դարի առա-

Էջ. 213-219; «Տաղաշատիկներ Գրիգորի Մագիստրոս Պահլավունու», Վենետիկ, 1868, էջ 1-79; տե՛ս R. W. Thomson, *A. Bibliography of Classical Armenian literature to 1500 AD*. Turnhout 1995, էջ. 127-128.

7 Տե՛ս A. Terian, *The Bible in Verse*, էջ. 216.

8 Տե՛ս Լ. Գ. Խաչերյան, Գրիգոր Պահլավունի Մագիստրոս (985-1058 թթ.). Կեսանքն ու գործունեությունը, Լոս Անջելես, 1987, էջ 333 և հր.:

9 Տե՛ս J. Rypka, *Iranische Literaturgeschichte*. Leipzig 1959, էջ. 175.

10 Բյուզանդական եկեղեցու ԺԱ դարի աղանդներից է. տե՛ս The Orthodox Dictionary of Byzantium, vol. 3, Oxford, 1991, p. 1670 (թարգմ.)

11 Տե՛ս G. Dagron, "Le christianisme byzantin du VII^e au milieu du XI^e siècle", in: *Evêques, moines et empereurs (610-1054)*, ed. G. Dagron, P. Riché, A. Vauchez (Histoire du christianisme des origines à nos jours IV). Paris 1993, էջ 331-336. [Այս հեղինակը հայագիտությանն առավել ծանոթ է Եթիմիոս Զիզարենոս անունով. տե՛ս Պ.Մ. Մուրադյան, Եթիմիոս Զիզարենոսի «Panopliav dogmatikhv» երկի հին վրացերեն թարգմանությունը, Նայիբը «Մաքր և հայագիտության հարցեր», Երևան, 1968, էջ 266-304, թարգմ.:

12 Տե՛ս V. Nersessian, *The Tondrakian Movement. Religious movements in the Armenian church from the fourth to the tenth centuries*. London 1987.

ջին կեսին արդեն օգտագործվել են հայերեն թարգմանությամբ Նովիանոսե Մայրագոմեցու կողմից, ինչպես ցույց է տվել Կիմ Մուրադյանը¹³: «Յաղագս վեցօրեայ արարչության» երկի այս թարգմանությունը, որը հրատարակել է Կիմ Մուրադյանը¹⁴, պետք է կատարված լինի ոչ ավելի վաղ քան Զ դարի սկիզբը, ինչպես ենթադրել է Կալիս ասորերեն բնագիրը¹⁵:

Ինչ վերաբերում է Գրիգոր Նյուսացու «*De hominis opificio*» (Յաղագս կազմության մարդոյ) երկին, հայրաբանական դարաշրջանի երկրորդ մեծ «Վեցօրեային», որը հայերեն է թարգմանվել 712 թ. Կ. Պոլսում, Սյուրիանոս Սյունեցու և Դավիթ Նյուսապոսի ձեռքով¹⁶, դրա մի հատվածը՝ 25-րդ գլուխը իբրև ընթերցում ընդգրկված է 1456 թ. թվագրվող Երևանի ՏՊ 993 ճառերի շարքում, որն ուսումնասիրվել է Խ. Միշել Վան Էսբրոեկի և Խ. Ուգո Զանեթիի ջանքերով¹⁷: «*De hominis opificio*»-ի հայկական տարբերակի հրատարակությունը չափազանց արժեքավոր կլիներ, քանի որ այդ աշխատության բովանդակությունը շատ դժվար է ըմբռնել, ինչպես հավաստում են հին սլավոնական և հայկական տարբերակները¹⁸: Այս թարգմանությունը Մերքիայում կատարվել է ԺԳ. դարում և հրատարակվել է Լառա Մելիի դոկտորական թեզում, որի պաշտպանությունը վերջերս կայացել է Բելգիայի Գանդ քաղաքում¹⁹:

Քանի որ Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայից» ճառերը, ինչպես նաև Գրիգոր Նյուսացու «*De hominis opificio*» աշխատությունը արձակ երկեր են, ապա դրանք Գրիգոր Մագիստրոսի աստվածաշնչական պոեմի վրա կարող էին ազդել միայն անուղղակի կերպով: Ուրեմն, հարկավոր է վերադառնալ Գեորգ Պիսիդեսի Կասաներկոտուրնյա վանկով գրված երկար պոեմին, որը, ըստ Զարբհանալյանի²⁰, հայերեն է թարգմանվել նախքան Ժ. դարը՝ Գրիգոր Նարեկացու և Գրիգոր Մագիստրոսի դարաշրջանից առաջ: Վերջերս ձեռնարկված հեղափոխությունները, այդ թվում նաև Գաբրիելյա Ուրուխյանի և Զանկարո Բոլմեզիի կատարած հրապարակումները²¹, ընդգծում են հայ թարգմանական

13 К. М. Муральян, Древнеармянские переводы гомилии Василия Кесарийского, in: Кавказ и Византия 3. Erevan 1982, p. 182.

14 Բարսեղ Կեսարացի, Յաղագս վեցօրեայ արարչության / Աշխատ. Կիմ Մուրադյանի (Նայ թարգմանական հուշարձաններ 2), Երևան, 1984; հմմտ. Կ.Մ. Մուրադյան, Բարսեղ Կեսարացին և նրա «Վեցօրեան» հայ մատենագրության մեջ, Երևան, 1976:

15 CPG Suppl. № 2835.

16 Գ. Զարբհանալյան, Մարենադարան հայկական թարգմանության նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 371, որն նաև Սյուրիա Վարդանյանի գեկուցումը նույն գիտաժողովում (թարգմ.):

17 M. Van Esbroeck – U. Zanetti, Le manuscrit Erevan 993. Inventaire des pièces. Revue des Etudes Arméniennes 12 (1977), p. 139 (№ 118).

18 Գրիգոր Նյուսացու «Յաղագս կազմության մարդոյ» երկի գրաբար թարգմանության բնագիրը հրատարակվել է բոլորովին վերջերս՝ Ս. Գրիգոր Նիսացի, Տեսություն ի մարդոյն կազմութիւն (Յաղագս կազմության մարդոյ), քնն. Բնագիր, առաջարկ և ծնթղթ.՝ Ս. Վարդանյանի, Ս. Էջմիածին, 2008 (թարգմ.):

19 L. Sels, De Kerkslavische vertaling van Gregorius van Nyssa's De hominis opificio. Kritische editie met taalkundig en vertaalkundig commentaar. Gent 2004.

20 Զարբհանալյան, Մարենադարան, 655; Thomson, A Bibliography p. 56.

21 G. Uluhogian : In margine alla versione armena dello „Hexaemeron“ di Giorgio do Pisidia. Rivista di Bizantinistica 1 (1991), pp. 91-109; G. Bolognesi: Sulla traduzione armena dello „Hexaemeron“ di Giorgio Pisides, տնւ, Atti del Sodalizio Glottologico Milanese 11 (1958), pp. 19-25 (վերահրապարակությունը տնւ G. Bolognesi, Studi e ricerche sulle antiche traduzioni armene di testi greci. Alessandria 2000, pp. 297-302).

մարենագրության մեջ չափաժողայդ երկի կարևորությունը, չնայած Գեորգ Պիսիդեսի «Վեցօրեից»-ի հին սլավոներեն տարբերակը, որը ԺԴ. դարում թարգմանվել է Սերբիայում կամ Աթոս լեռան վրա, հագեցած է հակասություններով և բացթողումներով: Այս երկու՝ հայկական և հին սլավոնական տարբերակների առկայությունը, այնուամենայնիվ, ցույց է տալիս, թե այդ պոեմն ինչքան հարգված է եղել քրիստոնյա արևելքում: Բոլորովին վերջերս, Կիրիլ Մանգոյին ձևոված հատրում, Պոլ Սպեկը ներկայացրեց Գեորգ Պիսիդեսի «Վեցօրեից»-ի մի նոր մեկնաբանություն, որը նույնպես պետք է հաշվի առնվի հայկական տարբերակի ծագումն իր ճիշտ համարեքստում տեղադրելու համար: Ըստ Սպեկի, այն եղել է Զաքարիա Երուսաղեմացու հաղթական երգը՝ 614 թվին Պարսկաստանի աթոռից վերադառնալու առթիվ: Ըստ հեղինակի Գեորգ Պիսիդեսը մեզ հասած խմբագրության հեղինակը չէ: Երկում պահպանվել է Պիսիդեսի «dossier»-ի մի շարք մանրամասներ, սակայն այն վերաշարադրված է Մակեդոնական Վերածննդի դարաշրջանում: Այնուամենայնիվ, ինչպես թվում է, երկը վերաբերում է «Վեցօրեից»-ի հայերեն թարգմանության ժամանակաշրջանին: Սպեկը չի հիշատակում հայկական տարբերակը և առավել ևս հունական բնագրի ու հայկական թարգմանության միջև եղած բնագրային տարբերությունները: Ավելի շատ նա ընդգծում է Նախաբանում (prooimion) և Առաջաբանում (epilogue) կատարված նորագույն մոծումները²²: Պետք է նկատի ունենալ Լուիջի Տարպագլիայի կողմից հունարեն բնագրի նոր հրատարակությունը (1998) ևս²³, թեպետ ըստ Պոլ Սպեկի, այն այլևս չպետք է օգտագործել:

Եվ Գրիգոր Մագիստրոսի, և՛ Գեորգ Պիսիդեսի պոեմների կառուցվածքը բավական նման է: Բայց սա ավելի շուրջ Աստվածաշնչից ներշնչված, հոգևոր թեմայով պայմանավորված նմանակություն է, բան բառի բուն իմաստով Աստվածաշնչային պոեմ, ինչպես Նոնոս Պանոպոլիտոս մոտ կամ թե ինչպես, նոր ժամանակների սահմանագծին՝ 1501 թվին խորվաթ բանաստեղծ Մարկո Մարտիլիո սրբաբան երկարաշունչ Յուդիթ պոեմը, որը հեղինակի մահից 3 տարի առաջ՝ 1521 թ. հրատարակել է Վենետիկում²⁴:

Այսպես ևս կուգեի ձեր ուշադրությունը հրավիրել, անհուն լինելու պարճառով պակաս հանրահայտ բնագրերի վրա, որոնք ի տարբերություն Գրիգոր Մագիստրոսի «Նազարեթեան»-ի, ընդգրկվել են Աստվածաշնչի ձեռագիր ընդօրինակությունների մեջ: Բյուզանդական մարենագրության մեջ կան նմանատիպ այլ դեպքեր. օրինակ չորս ավերաբանիչների վերաբերյալ փոքրիկ պոեմները ընդգրկված են Ավերաբանների մեջ²⁵,

22 P. Speck: Ohne Anfang und Ende: Das Hexaemeron des Georgios Pisides, in: Aetos – Studies in honor of Cyril Mango presented to him on April 14, 1998, ed. I. Ševčenko u. I. Hutter. Stuttgart-Leipzig 1998, pp. 314-328.

23 Տես ծանոթ. 2: Ինչպես նկատել է E. Follieri-ն, Byzantinische Zeitschrift 92 (1999), p. 565, № 2892, Վեցօրեից ճառերի Տարպագլիայի հրատարակումը քիչ անց, 1998 թ., վերահարադրակել է Ֆ. Գոնենլին Պիզայում (cf. Byz. Z. 93, 2000, p. 257, № 47).

24 Լուսավիպը վերահրատարակվել է Զագրեբում, 1950 թ.: Այս խնդրի վերաբերյալ կա հսկայական գրականություն. ի միջի այլոց տես M. Franičević, Povijest hrvatske renesansne književnosti. Zagreb 1983, pp. 719-721.

25 Դրանցից մի քանիսը հրատարակված են. H. von Soden, Die Schrift des Neuen Testaments in ihrer ältesten erreichbaren Textgestalt dargestellt auf Grund ihrer Textgeschichte I. Göttingen 1902, pp. 377-384; հմմտ. R. Devreesse, Introduction à l'étude des manuscrits grecs. Paris 1954, p. 169; այս ժանրի բնագրերի մեկ այլ օրինակ տես Վինենայի թ. 117 հունարեն աստվածաբանական մատյանում. H. Hunger, O. Kresten, Ch. Hannick, Katalog

կամ կարճ՝ փաստերկոտորնյա չափով, յուրաքանչյուր 8 ձայնի համար գրված պոեմներ, որոնք ընդգրկված են Ութաձայնի (Oktoechos) մեջ՝ յուրաքանչյուր ձայնի (ēchos) վերջում²⁶։ Ուրեմն, այսպեղ խոսքը պարզ հորինվածքի ուսումնական պոեզիայի մասին է, որը մինչև այժմ քիչ է ուսումնասիրված։ Մերկարիից և Ֆոլիերիից հետո, Ներբերպ Նունգերը «Reallexikon der byzantinischen Kunst»-ի չորս ավերարանիչներին վերաբերող հոդվածում (Bd. 2, Stuttgart 1971, S. 452-484) վարպետներն ուսումնասիրել է ավերարանիչներին նվիրված ուրանավորները։ Բայց թեմատիկորեն ուսումնասիրությունների դաշտը բավական աղքատ է։ Ամեն դեպքում, ըստ իս, հունական աստվածաշնչային ձեռագրերը չեն պարունակում այն, ինչի մասին հարց է առաջանում հայկական ավանդույթում։

Շուրջ 25 փարի՝ 1978-79 թթ., Էբս-Լա-Շապելի գործարանավերեր և արվեստի իրերի հավաքողներ Պիեր և Իրեն Լյուդվիգների ձեռագրերի հավաքածուն նկարագրվելու նպատակով պահվում էր Կոլոնիայի Շնյուրգեն թանգարանում։ Այդ անկանոն, սակայն հունական և լատինական մանրանկար ձեռագրերով հարուստ հավաքածուն պարունակում է նաև երեք հայկական մասյան։ Ձեռագրացուցակի հեղինակներ Անտոն Ֆոն Եվը և Յոախիմ Պրոցենկն ինձ խնդրել էին թարգմանել հայկական ձեռագրերի հիշարակարանները։ Նախագրացուցակում այս ձեռագրացուցակը 1979 թ. հրատարակվեց Կոլոնիայում և ներկայացնում է միջնադարյան արվեստի պատմության մի հուշարձան՝ շնորհիվ հիշարակված երկու հեղինակների գիտական նկարագրությունների²⁷։ Ժամանակի ընթացքում ձեռագրերի փոխվել են, և դրանք այժմ գտնվում են Կալիֆորնիայի Մալիբու քաղաքի Պոլ Գեյրի թանգարանում, ինչպես մասնաճյուղ է Բեռլինի Կոլլին իր «Répertoire des bibliothèques et des catalogues de manuscrits arméniens» գրքում (Turnhout 1992, p. 122)²⁸։ Այդ ձեռագրերի ծագումը, ինչպես միշտ, նման դեպքերում մնում է անհայտ։ Այս դեպքում մեզ մտահոգում է, որ ձեռագիրը մասն է կազմել նյույորքցի Նալոր Գևորգյանի հավաքածոյի։

Այդ ձեռագրերի մեջ կա նաև մի արժեքավոր հայկական Աստվածաշունչ, որը ընդօրինակված է 1637-38 թթ. Նոր Զուղայում, Վահրամի և Եփրեմի կողմից, Խոջա Աբդուլ անունով մի հարուստ պարվիրատուի համար, որն ամենայն հավանականության քրիստոնեություն ընդունած պարսիկ էր։ Դա մի ամբողջական, մանրանկարներով հարուստ Աստվածաշունչ է, և ունի ձեռագրի 610 թերթերում ցրված բազմաթիվ հիշարակարաններ, որոնք արժեքավոր տեղեկություններ են պարունակում պարվիրատուի ընտանիքի և այդ դարաշրջանի պատմական անցողաբանի մասին²⁹։

Սակայն մեզ այսպեղ հեղափոխություն են ուրանավոր մեկնությունները, որոնք ուղեկցում են հինկարակարանային գրքերի մեծ մասին, հարկապես նախադրություններին ու գլխացանկերին։ Այս ուրանավոր մեկնությունները վերաբերում են միայն Նին Կրա-

der griechischen Handschriften der ÖNB 3/2: Codices theologici 101-200. Wien 1984, p. 50.

26 Παρακλητική ἵτοι Ὀκτώηχος η Μεγάλη, Rome 1885, p. 98 et passim.

27 A. von Euw, J. M. Plotzek: Die Handschriften der Sammlung Ludwig I-IV. Köln 1979-1985.

28 Cod. I 14: von Euw - Plotzek I, p. 124-133.

29 Տե՛ս նույն տեղում։

կարանի գրքերին, այն էլ՝ ոչ բոլորին: Դրանք իհարկե անանուն են և ընդգրկված են վերևում ընդօրինակված սուրբգրային գրքերից մի քանիսի վերջում տեղադրված հիշարակագրությունների մեջ. օրինակ Թուոց գրքից հետո կարդում ենք. «Կապարեցաւ Թ-իւք», ապա՝ հաջորդում է հիշարակարանը. «Յիշեցէք...» (թ. 103ա): Խոսքը աստվածաբանական բովանդակությամբ ութավանկ ուրանավորների մասին է, որոնք հարաբերության մեջ են խնդրո առարկա աստվածաշնչային գրքերի հետ:

Ջուգահեռ տեղեկություններ փնտրելով՝ հեղափոխիցի Երեւանի թ. 345 ձեռագիրը, որը 1270 թ. թվագրվող, Կիլիկիայում ընդօրինակված Աստվածաշունչ է և պարունակում է սուրգրական այս կամ այն գիրքը մեկնող բանաստեղծական բնագրեր³⁰: Չնայած առկա նյութը բավական աղքատ էր, սակայն բավարար էր ցույց տալու համար, որ Նոր Զուղայի Աստվածաշունչը միակը չէ: Ամենին հավակնություն չունենալով սպառիչ լինել, այսպիսի մատնանշում մի երկարաշունչ պոեմ 12 կրտսեր մարգարեների գրքերից հետո և Դանիելից առաջ (թ. 557ա).

«Յովսեփ արքայ խմայելեան,
Որք թուրքիման ազգք կոչեցան...»

ինչպես նաև մի կարճ բնագիր Դանիելից հետո և Երեմիայից առաջ (թ. 570բ).

«Տարբամս յիմաստա Սուրբ Գրոց
Որովք սնայ յարբունս փոց...»³¹:

Այսպիսի ևս խոսքը վերաբերում է ութուրյնյա վանկով գրված ուրանավորներին: Ափսոս, որ ևս Կիլիկիայի Աստվածաշնչին ծանոթանալուց հետո հնարավորություն չունեցա՞վ երասրուգել Նոր Զուղայի ձեռագիրը, որպեսզի կարողանամ ճշտել, թե նույն բնագրերը հանդիպում են արդյոք թե ա՛յս, և թե մյու՛ս Աստվածաշնչերում, իմ գրառումները Վահրամ և Եփրեմ գրիչների Աստվածաշնչի մասին համապատասխանում են հիշարակարաններ պարունակող թերթերին: Նենց դրանից է իմ նկարառումների նախնական բնույթը, որոնք ևս չեն ցանկանում որևէ կերպ ուժեղացնել: Նաշվի առնելով իմ նշումների պակասավոր լինելը, ևս կցանկանայի հաստատել, որ երկու մատյաններից բերված այս փոքրիկ պոեմները իրենց կառուցվածքով փոքրերվում են փաստերկու փոքր մարգարեների մեկնությունից, որն առկա է ԺԶ. դարի վերջով (1599 թ.) թվագրվող Բոլոնիայի համալսարանի գրադարանի ՏՊ. 3291 մատյանում³²:

1270 թ. Կիլիկիայի Աստվածաշունչը, Մարենադարանի թ. 345 ձեռագիրը, նկարագրված է Շահե արքեպիսկոպոս Աճեմյանի Աստվածաշնչի հայերեն ձեռագրերի մեծ

30 Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան, Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մարենադարանի, Ա. Երևան, 1965, էջ 302:

31 Հիշարակված հարակույրները հրատարակված են ձեռագրի ընդարձակ նկարագրության մեջ (տե՛ս Մայր Ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուն Մարենադարանի, հտ. Բ / կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան, Ա. Քեօշկերեան. Երևան, «Նայիր» հրատարակչություն, 2004, էջ 117-134): Այս ձեռագրի սրացողն է Նեթում Ա թագավորի եղբայր Նովհանեստ քաթունի եպիսկոպոսը, գրիչը՝ Բարսեղ եպիսկոպոսը: Հիշարակված բանաստեղծական կտորների հիմնական մասը մեկենասի ուրանավոր հիշարակագրություններն են և հետավոր կապ ունեն աստվածաշնչային մեկնաբանության հետ - թարգմ:

32 Գ. Ուլունջյան, Բոլոնիայի հայերեն ձեռագիր թիվ 3291. - Բանբեր Երևանի համալսարանի - Նասարակական գիտություններ, 1993/2 (80), էջ. 105-114.:

ձեռագրացուցակում (Լիսաբոն, էջ 25), սակայն խնդրո առարկա ուրանավորները այսպեղ հիշարակված չեն: Այս մեծ ձեռագրացուցակի ընդարձակ առաջաբանը տեղեկությունների մի շարանարան է հայկական Ասրվածաշնչի պարմության, կանոնի և խմբագրությունների, սակայն չի հիշարակում այն փոքրիկ հավելումները, որոնք մենք հետագուրում ենք այստեղ, ընդգծելով դրանց արժեքը:

Իշխան Մաքս Մաքսոնացին, Սողոմոնի առակների Ներսես Լամբրոնացու մեկնության իր հրապարակության մեջ արդեն վեր է հանում հայ գրիչների նախասիրությունը (*Lieblingsgewohnheit*)՝ շարադրել չափածո հիշարակարաններ³³: Ներկայացնելով այս իրողությունը, մեր դեպքում Նոր Զուդայի, ինչպես նաև 1270 թ. Կիլիկիայի Ասրվածաշնչում, կարող ենք ենթադրել, որ Ասրվածաշնչային տարբեր գրքերի վրա հորինված այս պոեմները գործն են այս կամ այն ընդօրինակողի. Վահրամի և Եփրեմի, կամ Բարսեղի և Նովհաննեսի: Նարկ է Վահրամին և Եփրեմին վերագրել նաև Նոր Զուդայի Ասրվածաշունչ մարյանի վերջի (թ. 617ա-618ա) ընդարձակ պոեմը՝ գրված Նայրոնության գրքից հետո և Պողոսի թղթերից առաջ, հետևյալ սկսվածքով.

Փառք, գոհություն Արարողին,
Անգաղափար Ըսրեղծողին,
Ամիջաբառ Սահմանողին,
Անհաս մրաց Քննաողին:

Այս ընդարձակ պոեմը պարունակում է 36 բառարող, որին հետևում են 11 երկարող և 8 բառարող: Կիլիկիայի Ասրվածաշնչի դեպքում ուրանավորները մեկնում են Դանիելի Մարգարեությունը, հետևելով այդ գրքի ժամանակագրությանը:

1270 թ. Կիլիկիայի Ասրվածաշնչի մի կարճ հարված կարող է պարասխան տալ այս ուրանավորների հեղինակային պարկանելության հարցին: Սողոմոնի Իմաստության գրքից հետո (թղ. 475ա), գրվում ենք մի հիշարակարան, բաղկացած այբբենական հերթականությամբ գրված երեք երկարողից. Այբբ, Բենբ և Գիմբ գրվում են յուրաքանչյուր երկարողի սկզբում, [միջնամասում] և վերջում.

«Ասրուածեղէն հոգովն ի սմԱ, խաղաղութիւնն անուն արբԱ,
Բարբառեցաւ իմաստութեամԲ, գորդիս իւրաբեաց զգաւութեամԲ,
Գեղեցկա[զ]իր բանիւ[ն] թո ի կարԳ, գրիչ եղև հոգովն երաԳ»:

Ապա ընթերցում ենք. «Ներսեսի կաթողիկոսի սրբոյ է բանս»³⁴: Եթե այս վկայությունը արժանահավար է, պետք է այն վերագրել միայն Ներսես Շնորհալուն, որն հայկական պոեզիայում հայտնի է իբրև չափածո հանգի մշակող³⁵: Ներսես Շնորհալին կարող է հեղինակը լինել նաև ասրվածաշնչային տարբեր գրքերի վերաբերող այլ չափածո հորինվածքների: Պետք է հիշել նաև նրա ժամանակակցին՝ Ներսես Լամբրոնացուն, որը

33 Prinz Max, Herzog zu Sachsen: Nerses von Lampron, Erzbischof von Taron, Erklärung der Sprichwörter Salomos I. Leipzig 1919, p. IX.

34 Այս չափածո երկն ամբողջությամբ հրապարակված է, տե՛ս Ներսես Շնորհալի, Բանք չափաւ, Բ տալ. Վենետիկ, 1928, էջ 385; հմմտ. Վ.Ս. Ներսիսյան, Ներսես Շնորհալու պոետիկայի մի բանի հարցեր. - Ներսես Շնորհալի (հոգվածների ժողովածու), Երևան, 1977, էջ 165 - թարգմ.:

35 Տե՛ս Ն.Կ. Թ-սահմիգյան, Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ, Երևան, 1973:

հեղինակել է Նին Կրակարանի գրքերի բազմաթիվ մեկնություններ, սակայն չի բարձրացել կաթողիկոսական իշխանության:

Անդրադառնալով այս համառոտ բնարկման արդյունքներին: Դրանք ավելի ուղիղ-նական գծերով, քանի որ բխում են միայն հիշարարկված երկու ձեռագրերից և դեռևս բավարար չեն վերջնական եզրակացության համար: Այնուամենայնիվ կցանկանալի սրանով մարմանել ձեռագրացուցակում՝ հարկապես հարուկ, հերագուրական մի բացթողում. դրանց մեջ չեն արտացոլված մեզ հերաբրբրող չափաժող հավելումները³⁶: Նայելի է, որ հայ միջնադարյան մարենագրությունը հարուստ է հոգեւոր պոեզիայով: Ուշադրության արժանի է, որ ավելի կամ պակաս ընդարձակ պոեմների հիմքում, որոնք դրված են Նին Կրակարանի տարբեր գրքերի կամ մարյանի վերջում, ընկած է Աստվածաշունչը: Արդյո՞ք խոսքը գնում է միատարր կոմպոզիցիայի մասին, որի մասերը ցրվել են տարբեր տեղերում՝ ինչպես ավերարանիչներին ձուլված հունական պոեմների դեպքում է կամ բաժանվել են Ութաձայնի (Oktoechos) ութ ձայների վրա: Նամաստարասխանությունն առկա է, եթե անգամ պատասխանն առկա է: Այնուամենայնիվ, այդ չափաժող բնագրերի արժեքը չի կարելի չափագանցել: Տաղաչափական ձևը և չափը որոշում են սահմանները, այնպես ինչպես դա արված է կաթողիկոս Գրիգոր Տղայի պոեմներում: Մեզ հերաբրբրող չափաժող երկերի հեղինակային պարկանելությունը ևս ճշգրտվելու կարիք ունի: Իմ կողմից ներկայացված նոթադրությունը կհաստատվի կամ կհերքվի միայն հիշարարկված բնագրերի ծանոթագրված հրատարակումից հետո: Սակայն ամենակարևորն այն է, որ այս սուրբգրային մոտիվներով չափաժող բնագրերը պահպանվել են հայ միջնադարյան հոգեւոր պոեզիայի հարուստ գանձարանում:

ՖՐԱՆՍԵՐՆԻՅ ԹԱՐԳՄԱՆԵՅ
ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ

³⁶ Այդ բացն այսօր մասնակիորեն լրացված է Մաշտոցի անվան Մարենագրարանի ընդարձակ ձեռագրացուցակներում (թարգմ.)